ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/264

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» գնանշման հարցման ընթացակարգ, դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17148-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի 06.11.2020թ. թիվ 4/04-636 գրության հիման վրա, 19.11.2020թ.-ին «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 19.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/264 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.12.2020թ.-ին:

2. «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն 14.10.2020թ. թիվ 4/04-599 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

««Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն իր կարիքների համար ՀՀ գնումների օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն հայտարարել է «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 20/26» ծածկագրով գեանշման հարցման մրցույթ «Դեղորայքի և պատվաստանյութերի» ձեռքբերման նպատակով: Մրցույթի ամփոփման արդյուքում ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն՝ որին առաջարկվել է կնքել «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2» կնքված պայմանագրի վճարման № 1 համաձայնագիր:

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է համաձայնագիր կնքելուց:»:

«Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն 06.11.2020թ. թիվ 4/04-636 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Ի պատասխան 01.1/26-1/16002 28.10.2020թ գրության Ձեզ ենք ներկայացնում «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 20/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակում

կնքած պայմանագրը և սահմանված կարգով 25.09.2020թ. մասնակցին համաձայնագրի ծանուցման փաստը հավաստող ապացույցը:»:

«Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, ներկայացրել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

«Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին ուղղված 27.11.2020թ.-ի թիվ 4/04-687 գրությամբ հավելյալ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն իր կարիքների համար գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն հայտարարել է «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով զնանշման հարցման մրցույթ դեղորայքի և պատվաստանյութերի ձեռք բերման նպատակով: Մրցույթի ամփոփման արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն, որի հետ «02» սեպտեմբեր 2020թ կնքվել է ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2 ծածկագրով պայմանագիր: «25» սեպտեմբեր 2020թ. ծանուցվել ենք «Աբամա Թրեյդ» ՍՊԸ ին պայամանգիրը ուժի մեջ մտցնելու և համաձայանգիրը կնքելու: Ընկերությունը պետք է ներկայացներ որակավորման ն պայամանագրի ապահովումները բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ելնելով հրատապությունից «29» սեպտեմբեր 2020թ. ին դիմել ենք «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ին խնդրանքով հնարավորինս շտապ կնքել «25» սեպտեմբեր 2020թ.-ին ուղարկված համաձայանգիրը: Սակայն «14» հոկտեմբեր 2020թ ի դրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն դեռևս չէր կնքել համաձայանգիրը և բանավոր հրաժարվել է կնքելուց: «14» հոկտեմբեր 2020թ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն դիմել է ֆինանսների նախարարություն՝ տեղեկացնելով, որ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն հրաժարվում է կնքել համաձայնագիրը: Հանձնաժողովը. սպասելով սահմանված «5» աշխատանքային օրը «19» հոկտեմբեր 2020թ. կազմել է արձանագրություն առ այն, որ վերոնշյալ ընկերությունը չի ներկայացրել բանկային երաշխիք և կնքված համաձայնագիր: Ելնելով դրանից «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Պայմանագիր կնքած անձի կողմից փուժանքի ձևով ներկայացված որակավորման ն պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովողների փոխարինման դեպքում նաև նոր

ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Տեղեկացնում ենք, որ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ մինչ օրս դեռ միակողմանիորեն չի լուծել «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2» ծածկագրով պայմանագիրը և հետևաբար նաև չի ուղարկել գործը ֆինանսների նախարարություն՝ ընկերությանը գնումների գործընթացերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, այլ ընդամենը ցանկացել է տեղեկացնել ֆինանսների նախարարությանը, որ նման վտանգ կա, որը ի հայտ գալու դեպքում բժշկական կենտրոնը կհայտնվի ծանրագույն վիճակում: Միաժամանակ տեղեկացնում ենք , որ ընկերությունը մինչ օրս չի ներկայացրել պայամագրի ապահովում և կնքված համաձայանգիր:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ պատրաստվում է համաձայն գնումների օրենսդրության միակողմանի լուծել նշված «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2» ծածկագրով նշված պայմանագիրը, հրապարակելու այն և նոր միայն դիմելու ֆինանսների նախարարություն՝ ընկերությանը զրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից:»:

3. <u>«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.11.2020թ.-ին գրությամբ դիմել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17148-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 04.12.2020թ.-ին հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 24.11.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն հայտարարել է «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով գնանշման հարցման մրցույթ, և ճանաչվել է ընտրված մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

Կողմերի միջև կնքվել է թիվ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2» գնման պայմանագիր:

Սույն թվականի սեպտեմբերի 25-ին ծանուցվել է մեզ համաձայնագիր կնքելու մասին:

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետի.

12) ..... Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է.

Համաձայնագրի կնքման համար կարգով սահմանված ժամկետը լրանում էր միայն հոկտեմբերի 16-ին: Պատվիրատուն չի տրամադրել կարգով նախատեսված 15 աշխատանքային օրը մատակարարին և սույն թվականի հոկտեմբերի 14-ին իր թիվ 4/04-599 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն պայմանագիրը խզելու և մեր կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու համար:

2020թ-ի սեպտեմբերի 29-ին պատվիրատուից ստացել ենք գրություն, որով պատվիրատուն խնդրել է հնարավորության սահմաններում շտապ կնքել համաձայնագիրը և իրականացնել մատակարարումները: Մատակարարումների հետ կապված քննարկումների ընթացքում պատվիրատուն տեղեկացրեց և պնդեց, որ մատակարարը պետք է պահեստավորած ունենա համաձայնագրով սահմանած ամբողջ ապրանքը՝ մոտ 53 մլն ՀՀ դրամի, իսկ մատակարարումները պետք է իրականացվեն ըստ պատվերի, այնքան, ինչ քանակի պահանջ որ կունենան, հնարավորի է 53 մլն պահեստավորած ապրանքից սույն պայմանագրի շրջանակներում վերցնեն միայն 3 մլն ՀՀ դրամի ապրանք, հնարավոր է 7մլն ՀՀ դրամի, հնարավոր է 20 մլն-ի... այնսինքն այնքան, որքան պատվիրատուն կցանկանա, սա այն դեպքում երբ պատվիրատուն ստացել է համաձայնագրով նշված ամբողջ գումարի ֆինանսավորումը:

Այս ապօրինի պահանջն է հանդիսացել պատճառը, որ բանկային երաշխիքը չենք ներկայացրել ավելի վաղ ժամկետում այլ թողնվել է ավելի ուշ ժամկետում, սակայն օրենքով սահմանված 15 աշխատանքային օրում: Սակայն պատվիրատուն 15 աշխատանքային օր ժամկետը չլրացած ասել է որ չի կնքում մեր հետ համաձայնագիր և արդեն իսկ ուղարկել է գրությունը ֆինանսների նախարարություն:

Մեր այն պնդումներին, որ մենք ներկայացնում ենք պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում բանկային երաշխիքների ձևով համաձայնագրի ամբողջ գումարի՝ 52 935 385 ՀՀ դրամի համար, կնքում ենք համաձայնագիրը և իրականացնում ենք մատակարարումը ամբողջությամբ 52 935 385 ՀՀ դրամի չափով, պատվիրատուի կողմից մերժվել է:

Նաև փաստենք, որ նույնիսկ մինչ պայմանագրի կնքելը պատվիրատուին իրականացվել է մատակարարում պատվիրատուի խնդրանքով:

Բացի դրանից, այդ ժամանակահատվածում և մինչև համաձայնագիր կնքելու առաջարկը պատվիրատուի կողմից ուարկվել են մեզ բազմաթիվ պահանջագրեր ապրանքների մատակարարման վերաբերյալ, որից հետո միայն ուղարկել է համաձայնագիր կնքելու առաջարկ:

Ասենք ավելին, պատվիրատուի կողմից գրությունը ֆինանսների նախարարություն ուղարկելուց հետո էլ պատվիրատուն ուղարկել է մեզ բազմաթիվ պահանջագրեր տվյալ պայմանագրի շրջանակներում շուկայում խիստ սղություն ունեցող դեղորայքի մատակարարման համար, ինչը մեր կողմից չի մերժվել հաշվի առնելով հիվանդների առողջության առաջնահերթությունը և իրականացվել են նման դեղերի բազմաթիվ մատակարարումներ:

Օրինակ՝

Ամսաթիվը	*Մատակարարված ապրանքի գումարը*	*Ըստ պայմանագրի*
25.09.2020	*4 0149 89.83*	*«ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2»*
29.09.2020	*833 499.96*	*«ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2»*
22.10.2020	*2 950 000*	*«ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2»*
27.10.2020	*1 900 000*	*«ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2»*
30.10.2020	*1 475 000*	*«ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26-2»*

Ի դեպ, սեպտեմբերի 25-ին առաջարկված համաձայնագրով, որի կնքման վերջնաժամկետն է հոկտեմբերի 16-ը, պատվիրատուն նախատեսել է, որ 19 160 000 դրամի ապրանք պետք է մատակարարվի մինչև սեպտեմբերի 30-ի (նույնիսկ առանց հաշվի առնելու մատակարարի իրավունքը, ըստ որի առաջին փուլի մատակարարման ժամկետը,

պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը), իսկ 33 775 385 ՀՀ դրամի ապրանք՝ մինչև դեկտեմբերի 25-ը:

Նաև փաստենք որ այս ընթացքում մեր կազմակերպության կողմից գնվել և պահեստավորվել են մեծ քանակությամբ դեղորայք վերոնշյալ պայմանագրի շրջանակում, սակայն համաձայնագրի կնքումը ժամկետից շուտ չեղարկելու պատճառով մեր կազմակերպությունը կրել է մեծ ֆինասական վնաս, որի համար պատրաստվում ենք դիմել դատարան պահանջելու վնասի փոխհատուցում:»:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը և բերված ապացույցները, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը մերժել և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/264 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 02.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հիման վրա:

iv. Պատվիրատուն 25.09.2020թ.-ին էլ. փոստի միջոցով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

v. Պատվիրատուն 29.09.2020թ.-ին էլ. փոստի միջոցով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքում ավելացել են COVID-19 հիվանդների քանակը, որի պարագայում Մասնակցին խնդրել են հնարավորության սահմաններում շտապ կնքել 25.09.2020թ.-ին ուղարկված համաձայնագիրը և ապահովել համապատասխան դեղորայքով:

vi. «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 30.11.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 4/04-485 ծանուցման համաձայն՝ «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 02.09.2020թ.-ին կնքված «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով գնման պայմանագիրը «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 8.13-րդ կետի ուժով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17148-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ

ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 02.09.2020թ.-ին կնքված թիվ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հիման վրա: Պատվիրատուն 25.09.2020թ.-ին էլ. փոստի միջոցով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղարկել է թիվ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը, ինչպես նաև 29.09.2020թ.-ին էլ. փոստի միջոցով «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքում ավելացել են COVID-19 հիվանդների քանակը, որի պարագայում Մասնակցին խնդրել են հնարավորության սահմաններում շտապ կնքել

25.09.2020թ.-ին ուղարկված համաձայնագիրը և ապահովել համապատասխան դեղորայքով:

Սակայն «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել, որի արդյունքում www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 30.11.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 4/04-485 ծանուցման համաձայն՝ «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 02.09.2020թ.-ին կնքված «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով գնման պայմանագիրը «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 8.13-րդ կետի ուժով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 27.11.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 30.11.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացված փաստարկներին, որոնք վերաբերում են մատակարարումների հետ կապված քննարկումներին և այդ հիմքով բանկային երաշխիք չներկայացնելուն, համաձայնագրի ներկայացման 15 աշխատանքային օրյա ժամկետին և մինչև այն կնքելը իրականացված մատակարարումներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ դրանց վերաբերյալ Մասնակցի կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեցին համապատասխան վերաբերելի ու թույլատրելի ապացույցներ, որոնց ուսումասիրության արդյունքում հնարավոր կլիներ փաստել՝ Մասնակցի կողմից իր ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման մեղքի բացակայությունը և այն որ Համաձայնագիր կնքելը հնարավոր չի եղել Պատվիրատուի կողմից դրևորած գործողությունների կամ անգործության հետևանքով:

Ինչ վերաբերում է մինչև համաձայնագիր կնքելը մատակարարված ապրանքներին, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն ընթացակարգը նախաձեռնվել է Պայմանագրի 8.13 կետով սահմանված հիմքերի առկայության պայմաններում Պայմանագրի լուծման հետևանքով, որի պարագայում ընթացակարգի քննության

շրջանակները սահմանափակվում են համաձայնագիր չկնքելու հանգամանքներով, որոնք առնչություն չունեն մինչ առանց իրավական հիմքի ապրանքների մատակարարված լինելու փաստի հետ:

Ինչ վերաբերում է մինչև համաձայնագրի կնքման համար Օրենքով սահմանված 15 աշխատանքային օր ժամկետի լրանալը Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկված գրության և դրա վերաբերյալ Մասնակցի դիրքորոշմամբ բերված փաստարկներին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը, իրեն 25.09.2020թ.-ին ներկայացված համաձայնագիրը, պետք է կնքեր և Պատվիրատուին ներկայացներ մինչև 19.10.2020թ.-ը: ՀՀ ֆինանսների նախարարությունը «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգը նախաձեռնել է 19.11.2020թ.-ին՝ «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի 06.11.2020թ.-ի թիվ 4/04-636 գրության հիման վրա, այլ ոչ թե՝ 14.10.2020թ.-ի: Այլ կերպ ասած՝ համաձայնագրի կնքման համար Օրենքով սահմանված 15 աշխատանքային օր ժամկետը լրանալուց հետո: Ընդ որում, հարկ է նկատել, որ Մասնակիցը Պատվիրատուի՝ լիազորված մարմնին ուղղված 14.10.2020թ.-ի գրության վերաբերյալ իրազեկվել է Բողոքներ քննող անձի կողմից վերջինիս 17.11.2020թ.-ին ուղղված գրության կից նյութերով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված

պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17148-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/264 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**